

«ԵՐԵՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՉ»  
ՊՈԱԿ

ՀՆԳԱՄՅԱ՝ 2017-2022թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Նորը պետք է ստեղծել ճակատի քրտինքով, իսկ հինը  
կշարունակի գոյատևել և դիմանալ հենակների վրա...  
Ա. Գերցեն

Կազմող՝ ՎՐԵԺ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ըստ «Նախնական մասնագիտական (արհեստագործական )և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական քաղաքականության հիմքերը է ստեղծել պայմաններ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի բնականոն գործունեության զարգացման համար, որի կազմակերպական կանոնադրվյալն հիմքերը է հանդիսանում քոլեջի զարգացման ծրագիրը:

Այն նպատակաուղղված է համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը: Եթե քոլեջի աշխատանքային պլանը հիմնականում ուշադրություն է դարձնում ուսումնական հաստատության ընթացիկ խնդիրների լուծմանը, ապա զարգացման ծրագիրը հանդես է գալիս որպես քոլեջի ռազմավարական պլան, որն ավելի շատ նպատակաուղղված է դեպի ապագան, ոչ միայն ամենօրյա, այլև ապագա խնդիրների լուծմանը:

2. «2017-2022թթ. ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր) մշակել են՝ ըստ Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական ծրագրի:

3. Ծրագրի հիմքում դրվել են նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև Շենգավիթ համայնքի առանձնահատկությունները :

4. Հիմք ընդունելով քոլեջի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները՝ ծրագիրն ուղղված է դրանց աստիճանական զարգացմանը՝ նախանշելով առաջնային գերակա ուղղություններն ու ռազմավարությունները:

## 2. ՔՈՒԼԵՋԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Քոլեջի բարեփոխումները կսկսեն գործադիր մարմնի՝ տնօրենի պաշտոնում ընտրվելուց անմիջապես հետո՝ իրականացնելով ժողովրդավարական կառավարում: Ինձ համար այդ արժեքներն են ոչ միայն գիտելիքը, այլ նաև անաչառությունը և նորարարությունը:

2. Այսօր քոլեջի շենքը մեղմ ասած բարեկարգ վիճակում չէ, չունի լոկալ կաթսայատուն, վերջին անգամ վերանորոգվել և գույքով, նյութատեխնիկական միջոցներով հագեցվել է 1983թվականին: Չունի ժամանակակից հագեցվածությամբ համակարգչային լսարան , վերջինս ապահովված է ինտերնետ կապով: Նախորդ տնօրենի կողմից ստեղծված միջազգային կապերի

շնորհիվ քուլեջն ունի բարձր վարկանիշ աշխարհի բազմաթիվ երկրներում, որի առաքելության լիարժեք և ամբողջական ձևավորումը չի ավարտել:

3. ՄԿՈՒ որակի շարունակական բարելավումը, միջազգային կրթական համակարգին ինտեգրումը առաջացրել են նոր մարտահրավերներ, որոնց հաղթահարմամբ է պայմանավորված քուլեջի ապագան:

4. **Քուլեջի գերխնդիրն է** կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացումը:

### 2.1 Քուլեջի ներկա փուլի առավել ընդգծված հիմնախնդիրներն են՝

1/ անբավարար է ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների հասանելիությունը և կիրառումը ուսումնական գործընթացում, կա էլեկտրոնային ուսումնական նյութերի պակաս.

2/ քուլեջի ուսումնանյութական բազան , հատկապես լաբորատորիաները , չի համապատասխանում ժամանակակից պահանջներին.

3/ բարելավման կարիք ունեն քուլեջի լրացուցիչ ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմները.

4/ քուլեջի կառավարման բոլոր մակարդակներում կա կառավարչական կարողությունների, կառավարման արդյունավետ մեխանիզմների զարգացման անհրաժեշտություն.

5/ ցածր է սովորողի կողմից որակյալ կրթություն ստանալու ցանկությունը .

6/ թերի է համագործակցությունը գործատուների , Հայաստանի Հանրապետության դպրոցների, ինչպես նաև արտասահմանյան հաստատությունների միջև:

«Երևանի մշակույթի պետական քուլեջ» ՊՈԱԿ-ը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է, որը գործում է իր կանոնադրության համապատասխան: Ուսումնական հաստատությունը իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր, նաև կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հանրակրթական և (կամ) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր:

2017-2018 ուստարում քուլեջն ունի 260 ուսանող, որոնցից՝ 203 սովորում են պետական պատվերի ուսուցման համակարգում , իսկ 57 վճարովի ուսումնական համակարգում: Ձևավորված են 27 խմբեր, կուրսերի միջին խտությունը՝ 10 ուսանող:

Քոլեջն ունի 73 աշխատող, նրանցից մանկավարժի, մասնագետի որակավորում ունեցող կամ հինգ տարուց ավելի մանկավարժական ստաժ ունեցող 53 դասախոսներ: Գրեթե բոլորը տիրապետում են նորագույն մանկավարժական տեխնոլոգիաներին, ունեն համակարգչային գիտելիքներ և մասնագիտական բարձր որակավորում /համաձայն հավաստագրերի/: Դասախոսների համակազմում կան թե՛ փորձառուներ, թե՛ սկսնակներ:

7. Քոլեջում միջին մասնագիտական կրթություն է իրականացնում թվով 10 մասանգիտություններով .

ա)Ռեժիսուրա

բ)Երգեցողություն

գ) Հագուստի մոդելավորում և նախագծում

դ)Լուսանկարչական գործ

ե)Դերասանական արվեստ

զ)Էստրադային արվեստ

է)Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ

ը) Արվեստի ստեղծագործությունների վերականգնում , կոնսերվացում և պահպանում

թ) Հաշվապահական հաշվառում /ըստ ոլորտների

ժ)Կինոսարքավորումների և տեսատեխնիկայի շահագործում

Ընտվելու դեպքում նախատեսում են «Կինոսարքավորումների և տեսատեխնիկայի շահագործում», «Հաշվապահական հաշվառում» մասանգիտություններով դադարեցնել ընդունելությունը և հանձնել լիցենզիաները, քանզի դրանք աշխատաշուկայում պահանջարկ չունեն նաև չեն համապատասխանում քոլեջի արվեստի ոլորտի կադրերի պատրաստման ռազմավարությանը: Նաև վերանայել քոլոջում գործող մասանգիտությունների ցանկը :

Ընտվելու դեպքում, քանի որ ուսումնական հաստատությունը հիմնադրվել է 1929 թվականին և իր գործունեությամբ հանարպետությունում ունի մեծ ավանդ նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում կադրերի պատրաստման գործում : Կնախաձեռնեմ առաջիկայում լուծել քոլեջի անվանակոչության հարցը :

### Ուսումնականության հազեցվածությունը

Քոլեջը չունի ֆիզիկայի,քիմիայի,կենսաբանության համար նախատեսված ժամանակակից լաբորատոր սարքավորումներ և պիտույքներ: Կահավորված է մեկ համակարգչային կաբինետ՝ հազեցած օգտագործված 5 համակարգիչներով, ուսումնական նյութերով: Անհրաժեշտություն կա ուսումնականության բազայի նորացման, գույքի թարմացման և արդիականացման, ՏՀՏ ժամանակակից միջոցներով համալրման,

ուսումնական նյութի համակարգչային տարբերակների մշակման, գրադարանի հարստացման, էլեկտրոնային գրադարանի ստեղծման, էլեկտրոնային դասագրքերի ստեղծման:

## **Շենքային պայմաններ**

Քոլեջն ունի մեկ շենք, որը կարիք ունի ամրացման, ամբողջական հիմնանորոգման:

Անմխիթար վիճակում են գտնվում գրեթե բոլոր դասասենյակները, սանհանգույցները, չունի սպորտդահլիճ:

2007թվականից ՀՀ կառավարության որոշմամբ, շենքի 820 ք/մ տարածք ժամանակավոր հատկացվել է Երևանի ջազային և էստրադային արվեստի պետական քոլեջին, որն էլ մասնակի, կոսմետիկ վերանորոգվել է քոլեջի օտարված շենքի գումարով: Այսօր շենքի մասնատումը գերխնդիր է, որի հետևանքով չի բավականացնում դասասենյակները և 2018-2019 ուս. տարվա ընդունելությունը կանախատեսելով՝ հստակ կարող եմ ասել, երկու ուսումնական հասատությունները մեծ խնդրի առաջ են կանգնելու:

Ընտրվելու դեպքում ինձ համար առաջնային և որպես գերխնդիր համարում եմ բարձրացնել շենքի հարցը լիազոր մարմնին համապատասխան լուծումներ գտնելու նպատակով:

### **2.2. Քոլեջի զարգացումը կրթության որակին համապատասխան**

Նոր սերնդին բարձրորակ կրթություն տալու նպատակով, պետք է օգտագործել կազմակերպման ժամանակակից լավագույն եղանակները, ելնելով քոլեջի ոլորտային առանձնահատկությունից ստեղծել նոր տարբերակ՝ դրա ձևավորման հիմքում դնելով մի քանի պարտադիր սկզբունքներ.

- ուսուցման կազմակերպում՝ ազգային գաղափարախոսության հենքի վրա.
- ուսանողների դաստիարակություն՝ ազգային բարոյական նորմերով
- գիտելիքների մատուցում՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան
- մրցունակ շրջանավարտների պատրաստում՝ շուկայական պահանջներին համապատասխան
- ուսումնական օպտիմալ ծանրաբեռնվածության սահմանում, անհարկի նորամուծությունների բացառում, որոնք ավելացնում են ուսանողի առանց այդ էլ բարձր ծանրաբեռնվածությունը

- ուսանողին << Սովորեցնել սովորել>> մեթոդական բարդ հնարքների միջոցով իրականացնել վերլուծության, բացահայտման և ընկալման հաջորդական գործընթացները
- ուսանողի ուսուցման գործընթացը զուգակցել գիտելիքների ստուգման նոր տեխնոլոգիայի ներդրումով՝ ուսանողի և դասախոսի համար միշտ բաց պահելով որակյալ ուսուցման ճանապարհը
- ուժեղացնել և ավելի բովանդակային դարձնել միջառարկայական համագործակցությունն ու լրացուցիչ կրթությունը՝
- նորացնել կրթության կառավարման համակարգը՝ ուսանողակենտրոն կրթադաստիարակչական աշխատանքը դարձնելով ուսուցման և դաստիարակության գլխավոր պայման
- ուսանողներին հնարավորինս զերծ պահել բարդույթներից
- ներդնել ուսուցման որակի կառավարման նոր համակարգ , որի հիմքը կլինի համագործակցության պայմանագրերի կնքումը դասախոսների փորձի և ուսանողների փոխանակման նպատակով աշխարհի տարբեր երկրներում գործող ուսմնական հաստատությունների հետ:
- յուրաքանչյուր ուսանողի մեջ հավասար սեր և նվիրում առաջացնել կրթության նկատմամբ, ցույց տալ հարուստ և բարեկեցիկ կյանքով ապրելու իրական ուղին, որն անցնում է ճիշտ մասնագիտական կողնորոշում ձեռք բերելու ճանապարհով:

Նպատակիս կարող եմ հասնել միայն բանիմաց, ժամանակակից կրթական պահանջներին համընթաց քայլող, պատրաստակամ մանկավարժների (ոչ դասախոսների ) հզոր թիմի միջոցով, որը կկարողանա իրականացնել քուլեջի որդեգրած քաղաքականությունը:

Վերոհիշյալ նպատակները բխում են ժամանակակից իրականության պահանջներից, որն իրականացվելու է հետևյալ սկզբունքներով՝

- թիմային պայքարի միջոցով մրցակցային ոգու ձևավորում
- ազատ շփման և հաղորդակցման հմտությունների զարգացում
- փոխադարձ հարգանքի ձևավորում
- հաղթանակի ձգտում
- համագործակցություն՝ լավագույն արդյունքի հասնելու և աշխատանքը ավարտին հասցնելու ձգտում
- ինքնահաստատում

## 2.3 Ուսուցման կազմակերպման ձևերն ու մեթոդները

Առաջնորդվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական )և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով որդեգրված այն սկզբունքով, որ մասնագիտական կրթության բնագավառում պետությունը երաշխավորում է ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնությունը, ՄԿՈՒ որակի շարունակական բարելավումը, Երևանի մշակույթի պետական քոլեջը կիրականացնի աստուսուսմնական ուսուցում (փորձնական):

Ուսուցումը և դաստիարակությունը կազմակերպելիս անհրաժեշտ է նկատի ունենալ կրթակարգի պահանջի հետևյալ ելակետային հիմնադրույթները.

- յուրաքանչյուր սովորող ի վիճակի է յուրացնելու մանկավարժորեն և հոգեբանորեն ճիշտ ընտրված և ներկայացված ցանկացած ուսումնական նյութ
- ուսանողները միմյանցից զանազանվում են ոչ թե ուսումնական ծրագրերի յուրացման կարողությունների սկզբունքային տարբերություններով, այլ իրենց մտածելակերպով, հոգեբանական առանձնահատկություններով, լեզվամտածողության և ընկալման յուրահատկություններով
- ուսուցման նկատմամբ սովորողի դրական վերաբերմունքը պայմանավորված է ինչպես ուսումնական նյութի բովանդակությամբ, այնպես էլ այդ նյութի յուրացման հաջող ընթացքով

## Դասախոսների մասնագիտական կատարելագործումը

Արտասուսումնական պարապմունք անցկացնելու համար դասախոսը պետք է անցնի լուրջ վերապատրաստում՝ ոչ միայն ընկալի գաղափարախոսությունը, տիրապետի կոլեկտիվ ուսուցման մեթոդիկաներին, այլև հեղաշրջում կատարի ուսումնական գործընթացի կազմակերպման հնարավորությունների մասին իր աշխարհայացքային պատկերացումների մեջ. կարողանա արմատապես փոխել առարկայի տարեկան կառուցվածքը, փոխել ուսումնական պարապմունքի կառուցվածքը, հաշվառման և վերահսկման համակարգը, իր և ուսանողների աշխատանքի ձևերը, իր աշխատանքի

նպատակն ու բնույթը, ուսուցման կազմակերպման ծրագրման, նախապատրաստման և կառավարման գործընթացները, ուսանողին ընկալի որպես ուսումնական գործունեության սուբյեկտի, ուսումնական գործընթացի կազմակերպման գործընկերոջ, գիտակցի անընդհատ վերապատրաստման, անընդհատ կատարելագործման և անընդհատ ինքնակրթության անհրաժեշտությունը:

Ուսումնական պարապմունքներն սկսելուց առաջ դասախոսները երկարատև պատրաստություն են անցնում (դասախոսություններ, սեմինարներ, մտագործունեական խաղեր և այլն), և այդ գործընթացը շարունակական է (ամենշաբաթյա քննարկումներ, ռեֆլեքսիաների ամենամսյա սեմինարներ, հաշվետվություններ և այլն):

#### **2.4.Քոլեջի կառավարման արդյունավետության բարձրացում**

Քոլեջում կատարվող աշխատանքների կառավարման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել գնահատման արժեքային համակարգ, որի անմիջական աջակցողները պետք է լինեն քոլեջում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, դասախոսը և մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշխատողները, կոլեգիալ կառավարման խորհուրդը: Այն քոլեջի կառավարումը կդարձնի ավելի թափանցիկ և արդյունավետ: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել նրանց գործունեությունը և բարձրացնել նրանց դերը:

#### **Կարիերայի կենտրոն**

Քոլեջում ստեղծել կարիերայի կենտրոն , որը կբարձրացնի համագործակցությունը գործատուների և այլ ուսումնական հաստատությունների միջև :

Կարիերայի կենտրոնի միջոցով քոլեջի շրջանավարտները կունենան հնարավորություն աշխատաշուկայում գտնելու իրենց մասագիտական կարողություններին համապատասխան աշխատանք:

Կարիերայի կենտրոնը նաև կնպաստի մասնագիտական կողմնորոշման գործընթացին կազմակերպելով հանրապետության դպրոցներում մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություններ:



### Հոգաբարձուների խորհուրդ

Քոլեջում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար մեծ դեր կունենա հոգաբարձուների խորհուրդը: Անհրաժեշտ է քոլեջում ստեղծել հոգաբարձուների խորհուրդ: Խորհրդի կազմում ընդգրկել քոլեջի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների: Հետագա տարիների ընթացքում կաշխատեմ նրանց ներգրավել քոլեջի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի հարստացմանը: Համագործակցելով ծնողների, վարչական տարածքի ղեկավարի հետ՝ կիրականացնենք սոցիալական ծրագրեր Հոգաբարձուների գործունեության նպատակը պետք է լինի ներդրումներ և նվիրատվություններ ներգրավել անհատ բարերարներից, քոլեջի շրջանավարտներից և կամավոր ֆինանսավորողներից: Գործընթացը պետք է լինի առավել թափանցիկ և մատչելի՝ բարերարի, քոլեջի և տեղական ինքնակառավարման ու պետական մարմինների համար:

### Ուսանողական խորհուրդ

Սովորողների ինքնավարության և ինքնակառավարման նպատակով քոլեջում պետք է ակտիվացնել ուսանողական խորհրդի գործունեությունը: Նպաստենք, որ նրանք մասնակցեն քոլեջի շրջանակներում որոշումների կայացմանը, կարողանան ազատ արտահայտել իրենց կարծիքը:

Քոլեջում կայացած ուսանողական խորհուրդը կնպաստի երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը: Քանի որ սովորողը որակյալ կրթության պահանջողն է, պետք է լսել նրա կարծիքը դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, կարգապահության բարելավման վերաբերյալ:

Քոլեջի զարգացման ծրագրի շրջանակում նախատեսված է, որ ուսանողական խորհուրդը ստեղծի պատանեկան ակումբ << Ես քո ապագա պաշտպանն եմ, հայրենիք >> անվամբ: Համագործակցելով Շենգավիթ վարչական շրջանի կրթության և մշակույթի բաժնի հետ՝ սովորողներն իրենց համայնքը՝ որպես կրթական պարտեզ, կդարձնեն խնամված, հետաքրքիր և գրավիչ: Մասնակիցները կդառնան տնտեսող, հոգատար, գործուն, հայրենասեր քաղաքացի: Ակումբի նպատակն է սովորողներին նախապատրաստել

պետության կողմից որդեգրած “Ազգ- Բանակ” գաղափարախոսության կերտմանը և ինքնուրույն կյանքի ձևավորմանը:

Ուսառական թատրոն - ստուդիայի ստեղծում , որը կնպաստի քոլեջում ուսանողների կողմից ստեղծագործական ակտիվ գործունեության ծավալմանը նաև ապագա մասնագիտական կարողությունների կատարելագործմանը: Բեմադրված լավագույն ներկայացումները և ֆիլմերը կունենան իրենց մասսայականացումը:

### **Դասավանդող կադրերի կարողությունների հզորացում**

Քոլեջի բարեփոխումների և զարգացման ծրագրերի հաջողությունն ու արդյունավետությունը մեծապես պայմանավորված է դասախոսների մասնագիտական պատրաստվածությունից, բարձրակարգ կրթական նվաճումներն առաջնորդելու և կյանքի կոչելու նրանց ընդգրկվածությունից ու պատրաստակամությունից:

Դասախոսները քոլեջի բարեփոխումների գործընթացի ակտիվ մասնակիցներն են: Դասախոսները աշխատանքային սովորական պայմաններում իրենց հանգիստ են զգում, բայց վախենում են ցանկացած նորամուծությունից: Բարեփոխումները կատարելիս պետք է դիտարկել այնպիսի գործոններ, ինչպիսիք են դասախոսի կարիքները, արժեքային համակարգը և պատրաստվածության աստիճանը: Պետք է հասնել նրան, որ դասախոսների մեծամասնությունը համոզվի, որ ուսուցման գործընթացի բարելավման գործում նոր գաղափարների անհրաժեշտություն կա: Ամենից կարևորը այն է, որ դասախոսը պետք է լինի գործնական և ոչ պաշտոնական: Գործնական լինելը տեսական լինելու հակառակն է: Գործնական գիտելիքները դասախոսը ձեռք է բերում լսարաններում ուսանողների հետ անմիջականորեն աշխատելիս: Այն միտված է բարձրացնելու սովորողների կարգապահությունը, հաճախումը և հաջողությունը: Քոլեջի բարելավմանը ուղղված նպատակներից մեկը կիրականացվի դասախոսի համար նոր սոցիալական իրողություններ զարգացնելու միջոցով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրեցօր մշակվում են բազմաթիվ ժամանակակից ուսուցման մեթոդներ, մանկավարժական կազմի ներկայումս կիրառվող մեթոդները չեն կարող տալ ցանկալի արդյունք , ուստի անհրաժեշտ է բարելավվել նաև վերապատրաստման գործընթացը` դասախոսներին ներգրավելով պարբերաբար վերապատրաստման դասընթացներին, համակարգչային գիտելիքների և անզլերենի իմացության ամրապնդմանը: Անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ մանկավարժների ինքնակրթության համար :

Քոլեջի բարեփոխումների կարևոր գործոններից է մշակել մեխանիզմներ դասախոսների խրախուսման, լավագույն դասախոսների հայտնաբերման համար, որի արդյունքում կներդրվի մանկավարժների աշխատավարձի

բարձրացման քաղաքականությունը՝ գործունեության արդյունավետության վրա հիմնված տարբերակված մոտեցումով: Այդ նպատակին կձառայի նաև մանկավարժների պարբերական ատեստավորումը՝ հիմքում դնելով գործունեության օբյեկտիվ ցուցանիշները:

Քոլեջում ուսուցումը կատարելագործելու, դասախոսների մասին որոշումներ կայացնելու նպատակով ներդնել նաև մանկավարժների գործունեության գնահատման համակարգ: Այն կներառի ուսուցում-ուսումնառություն գործընթացին առնչվող տեղեկատվության հավաքում, վերլուծություն և ներկայացում: Իմ կարծիքով դա կուղղորդի դասախոսներին՝ դասավանդումը կատարագործելու և մասնագիտորեն աճելու: Իրականացված աշխատանքներից հետո սպասվում են հետևյալ արդյունքները՝

- դասախոսների մասնագիտական որակի մակարդակի բարձրացում
- մեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունների և բովանդակության համակարգում
- դասախոսների մեթոդական աշխատանքների պահանջարկի բարձրացում
- դասախոսների մեթոդական մշակումների մրցունակության ապահովում
- դասախոսների հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում

### **Կառավարման խորհուրդ**

Քոլեջի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի դերը՝ ներգրավելով նրան վերահսկողական գործընթացում:

Պետք է ամրապնդել ստեղծվող հոգաբարձուների խորհրդի և կառավարման խորհրդի սերտ համագործակցությունը: Տարվա կտրվածքով կներկայացնեմ եռամսյա հաշվետվություններ, կկազմակերպեմ ի հայտ եկած առաջարկությունների քննարկումը և կձեռնարկեմ միջոցներ դրանց իրականացման համար:

Խորհուրդը ակտիվորեն մասնակցություն կունենա ֆինանսական պլանավորման մեջ, կնպաստի քոլեջի ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործմանը:

Շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները և համամասնությունները սահմանելիս առաջնությունը կտրվի օժտված և շնորհալի սովորողների բացահայտմանը, նրանց կարողությունների մակարդակով կրթության գործի կազմակերպմանը և գնահատմանը :

**Քոլեջում կրթական գործընթացի համակարգչայնացումը և արդիականացումը**

Քոլեջում արդեն իսկ առկա է համացանցային միջավայրը ու տեղեկատվական տեխնոլոգիաները: Համացանցում պարբերաբար պետք է տեղադրվեն քոլեջի գործունեության և ուսանողների մասնագիտական կարողությունները լուսաբանող տեղեկատվություն, որը կլինի քոլեջի պաշտոնական կայքի ստեղծմամբ:

Այն կնպաստի քոլեջի գովազդմանը ուսանողները, ծնողները տեղեկացված կլինեն քոլեջում տեղի ունեցող իրադարձությունների մասին:

Քոլեջի զարգացման հետագա տարիներին անհրաժեշտ է բարձրացնել համակարգչայնացման մակարդակը:

Պետք է ավելացնել համակարգիչների քանակը, ձեռք բերել ինտերակտիվ գրատախտակներ և այլ սարքավորումներ:

Ուսումնական գործընթացը արդյունավետորեն կազմակերպելու համար պետք է բարձրացնել ուսանողների շրջանում համակարգիչների օգտագործելիության մակարդակը, «Ինֆորմատիկա» առարկայի դասավանդման որակը:

Պետք է ներդնել հետաքրքրաշարժ և նորարար ուսումնական մեթոդներ: Մշակել և ավելացնել ժամանակակից էլեկտրոնային ուսումնական պաշարներ:

Ընդլայնել ուսումնական գործընթացում տեղեկատվական–հաղորդակցական տեխնոլոգիաների՝ որպես ուսուցման և դասավանդման միջոցի կիրառում:

Առաջին իսկ պահին քոլեջում ներդրվելու է էլեկտրոնային կառավարման համակարգ, որով կվերահսկվի դասապրոցեսը : Օգտվելով կոնֆերանսային այդ համակարգից՝ ծնողը ցանկացած պահի կարող է հետևել իր երեխայի ուսումնական գործընթացին :

**Միջազգային կապերի զարգացում**

Քոլեջի զարգացման կարևորագույն խնդիրներից մեկը համագործակցումն է (հեռահաղորդակցության միջոցով) մարզային, երևանյան, ինչպես նաև արտասահմանյան կրթական հաստատությունների միջև: Համագործակցությունը կարող է նպաստել քոլեջի կառավարման և ուսումնական մեթոդների ոլոտում փորձի փոխանակմանը, ինչպես նաև այլ երկրների հետ սոցիալական և մշակութային կապերի ամրապնդմանը: Միջազգային համագործակցության

խթանման համար օգտակար միջոց է համընդհանուր ինտերնետային միջավայրի ստեղծումը, որը հնարավորություն կտա ինձ և դասախոսներին առցանց (օնլայն) կապ հաստատել այդ քաղաքների, երկրների ուսումնական հաստատությունների հետ, փոխանակել քոլեջի կառավարման և ուսումնական մեթոդների լավագույն փորձը:

### **Ֆինանսատնտեսական գործունեությունը**

Առանձնահատուկ կարևորություն պետք է տալ քոլեջի ֆինանսավորման աղբյուրների արդյունավետ համակարգմանը:

Ինչպես գիտենք, քոլեջի ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ ըստ իրականացվող հիմնական ծրագրի՝ կախված պետական պատվերի համակարգում սովորողների թվից նաև արտաբյուջետային միջոցներ, որոնք ձևավորվում են վճարովի համակարգում սովորողների վարձավճարներից:

Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ լրացուցիչ ֆինանսավորման համար.

1. Պետական բյուջեից՝
  - ա) իրականացնել արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար հատուկ կամ լրացուցիչ կրթական ծրագրեր
  - բ) իրականացնել ուսումնամեթոդական գիտափորձ և (կամ) այլընտրանքային ծրագրեր:
  - գ) ստեղծել ուսումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնական նյութեր(այդ թվում էլեկտրոնային):

2. Արտաբյուջեյի հզորացում՝
  - ա) կազմակերպել կարճաժամկետ վճարովի կրթական ծառայություններ: Կարելի է քոլեջում կազմակերպել՝ Երգեցողության, Թատերական – դերասանակն վարպետության, Նակարչության, Հագուստի մոդելավորման և ձևավորման, Պարի, Կոսմետիկայի և դիամահարդարման, Լուսակարչության – օպերատորության, դասընթացներ՝ գործող կարգին համապատասխան:
  - բ) զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ օրենքով սահմանված կարգով(օրինակ՝ արտադրել հագուստ և ստեղծել քոլեջի բրենդը)
  - գ) դիմել գործարարներին, հիմնադրամներին, քոլեջի հաջողակ շրջանավարտներին, անհատ բարեգործներին

### **3. Բյուջեից տնտեսված և արտաբյուջետային ստացված գումարները նպատակաուղղել՝**

- ա) քոլեջի շենքի վերանորոգմանը

- բ) քուլեջի շրջակայքի բակի բարելավմանը
- գ) ուսումնական գույքի ձեռքբերմանը
- դ) համակարգչային սենյակի ձևավորմանը, էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերմանը
- ե) աշխատողների, ուսանողների խրախուսման ֆոնդին.
- զ) քուլեջի արտաբյուջետային միջոցները պահել բանկային հատուկ հաշվում և ծախսել կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար
- է) յուրաքանչյուր տարի մինչև մայիսի 30-ը ամփոփել նախորդ տարվա կատարած ֆինանսական ծախսերի հարցը:  
Ապահովել թափանցիկությունն ու իրազեկվածությունը:

**4.2017-2022թթ . քուլեջը ցանկանում է՝**

1. ներդնել երրորդ օտար լեզուն՝ ֆրանսերենը (ելնելով արդի պահանջներից)
2. համալրել լաբորատորիաները կոմունիկացիոն և անվտանգության համակարգերով, ժամանակակից սարքավորումներով
3. ստեղծել , կարճաժակետ դասընթացների իրականացման բազա:

**5.Քուլեջին անհրաժեշտ է՝**

1. Շենքի կապիտալ վերանորոգում և գույքով հագեցում
- 2.բարեկարգ միջոցառումների հահլիճի , սպորտհարապարակ և մարզադահլիճ
- 3.հրաձգարան՝ռազմահայրենասիրական դաստիարակությունը քուլեջում բարձրացնելու համար